Հետազոտական աշխատանք

Խումբ՝ Ռ ուսաց լեզու

Թեմա՝ Քերականության ուսուցումը որպես խոսքային կարողությունների զարգացման միջոց

Հետազոտող՝ Նաիրա Մելքոնյան
134 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի

Ղեկավար՝ Աբաբս Մանուչարյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.Ռեցեպտիվ և պրոդուկտիվ խոսքային կարողությունների տեսակները, դրանց ուսուցման նպատակն ու խնդիրները 4

2.Փոքրաբարակաև ուսուցման և հետազոտական մեթոդների կիրառության միջոցով բերականության ուսուցման արդյունավետության ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում հանրակրթական միջին դասարանում 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզվի դասավանդման խնդիրները ներկայումս առավել ակնառու են դառնում, երբ կարևորվում են սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ազատ զարգացումը:

Սովորողի մեջ գիտելիքի, կարողությունների, հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման պահանջ ձևավորելու կարևոր պայման է դրական խթանը, իսկ օտար լեզվի ուսումնասիրության պարագայում բերականական ճիշտ կառույցներով կազմավորված խոսքը, երկխոսությունը, քանի որ վերջինս է ձևավորում աշխարհայացքը: Արդյունավետ փոխանցված գիտելիքը, կարողությունը և հմտությունը ոչ միայն հանդես են գալիս որպես ուսուցման նպատակ, այլև հետագա մասնագիտական աճի և շարունակական կրթության ապահովման գործիք, միջոց:

Օտար լեզվի ուսուցման արդյունավետության ապահովման խնդիրը կարևոր է յուրաքանչյուր պետության համար: Քանի որ կենսական պահանջները, տնտեսական առաջընթացները, մշակութային, քաղաքական և առևտրական կապերի ընդլայնումը առաջնային է դարձնում միջմշակութային հաղորդակցության կարևորությունը և անհրաժեշտ երկրի մշակույթի ու առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Այսօր ավելի քան անհրաժեշտություն կա կրթական բարեփոխումների և նորարար մոտեցումների, որոնք կարող են նպաստել լեզվի արդյունավետ յուրացմանը և կիրառությանը: Հաշվի առնելով ռուսաց լեզվի տարբեր ժամանակաձևերով խոսքային կառույցների կիրառման առանձնահատկությունները՝ անհրաժեշտություն է առաջանում հետազոտել և ուսումնասիրել կրթական գործընթացում:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ՀՀ հանրակրթական հաստատություններում ռուսերենի ներկա և անցյալ ժամանակաձևերի ուսուցման առանձնահատկությունների արդյունավետ ձևերի մշակման և կիրառման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն է բերականության ուսուցման որպես խոսքային կարողությունների զարգացման միջոցի ուսումնասիրումը:

1. Ռեցեպտիվ և պրոդուկտիվ խոսքային կարողությունների տեսակները, դրանց ուսուցման նպատակն ու խնդիրները

Ռուսերենի բանավոր հաղորդակցության ուսուցումը բարդ համակարգ է, որը ներառում է մի շարք մտավոր գործընթացներ՝ նոր տեղեկատվություն ընկալելը, մտապահելը, ճանաչելը, ինչպես նաև մշակելն ու փոխանցելը: Դրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին ներկայացնում է ֆիզիկական և մտավոր

ունակությունների և գործողությունների համադրություն՝ պայմանավորված մի շարք հատկանիշներով՝ սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, ընդհանուր գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվազգացողությունը և այլն [Колькер 2000:38]:

Ռուսերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացի արդյունավետությունը ՀՀ հանրակրթական հաստատություններում ապահովելու համար շատ կարևոր է առանձնացնել լեզվական կոմպետենցիայի այն բաղադրիչները, որոնք սահմանագծվում են ռուսերեն լեզվի բանավոր և գրավոր խոսքում: Դրանք են՝ բառապաշարը, քերականությունը, հնչյունաբանությունը: Հանդիսանալով լեզվական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչներ, յուրաքանչյուրը համապատասխանաբար իր ազդեցությունն ունի դպրոցականի խոսքային կարողությունների զարգացման վրա:

Ինչպես գիտենք լեզվի գործունեությունն ու յուրացումն ընդգրկում է այնպիսի գործունեություններ, որոնց կատարման ընթացքում մարդիկ՝ որպես հասարակական անհատներ, զարգացնում են մի շարք կարողություններ թե ընդհանուր, թե մասնավորապես լեզվական – հաղորդակցական: Նրանք օգտագործում են այդ կարողությունները տարբեր համատեքստերում կամ միջավայրում՝ որոշակի հաղորդակցական գործընթացների մեջ ներգրավելու նպատակով, որպեսզի ստեղծեն կամ ընկալեն որոշակի ոլորտներին ու թեմաներին վերաբերող տեքստեր՝ տվյալ խնդրի լուծման համար առավել նպատակահարմար ռազմավարությունների կիրառմամբ: Լեզվի յուրացման համար կարևորվում է նաև վարժությունների համակարգի կառուցումը, որն ուղղված է տվյալ ոլորտի և՛ լեզվի բառապաշարին, և՛ քերականությանը, և՛ արտասանությանը [3]:

ՀՀ հանրակրթական հաստատություններում այսօր սովորողների մոտ ռուսերենի գրավոր և բանավոր խոսքային կարողությունների զարգացման գործընթացում էական դեր է կատարում ռեցեպտիվ և պրոդուկտիվ վարժությունների համակարգը: Սովորողների մոտ ռեցեպտիվ և պրոդուկտիվ խոսքային կարողությունների զարգացումն իրականացվում է դասագրքերով նախատեսված տեքստերի, ինչպես նաև ինտերակտիվ վարժությունների փաթեթների միջոցով: Յուրաքանչյուր հանրակրթական դպրոցում դասագրքերում ներառված վարժությունների համակարգերը կառուցված են և հաշվառված սովորողների մտավոր, հոգեբանական, խոսքամտածողական այն առանձնահատկությունների հիման վրա, որոնք գործում են յուրացման ժամանակ, մյուս կողմից էական դեր է կատարում խոսքային կարողությունների ու հմտությունների ձևավորման հաջորդականությունը: Օտար լեզվով խոսքային կարողությունների ու հմտությունների զարգացումը ենթադրում է լեզվական (նախապատրաստական, մարզական) և խոսքային (իրադրական, ստեղծագործական) վարժությունների կատարում: Լեզվական վարժությունները կարող են լինել բնագավառային (բառական, քերականական, արտասանական) և համակարգված: Ինչ վերաբերում է խոսքային վարժություններին, դրանք միայն համակարգված են: Սովորողների լեզվահաղորդակցական

իրազեկությունը դրսևորվում է խոսքային գործունեության տարբեր ձևերում, ներառյալ ընկալումը, վերարտադրումը, փոխներգործությունը կամ միջնորդային գործունեությունը: Խոսքային գործունեության այս տեսակներից յուրաքանչյուրը կարող է հանդիպել թե բանավոր, թե գրավոր տեքստերում կամ միաժամանակ երկուսում էլ:

Մեթոդիկայում տարբերվում են վարժությունների հետևյալ տիպերն, որոնց հիմքում ընկած են տարբեր գործոններ.

- ըստ նպատակի՝ ռեցեպտիվ–ռեպրոդուկտիվ
- ըստ կարողությունների և հմտությունների ձևավորման հաջորդականության՝ լեզվական–խոսքային
- ըստ կատարման ձևի՝ բանավոր–գրավոր, թարգմանական – ոչ թարգմանական, ծրագրավորված – ոչ ծրագրավորված, անհատական –խմբային
- ըստ կատարման տեղի՝ դասարանային, լաբորատոր, տնային

Խոսքային կարողության ձևավորման հիմքը հաղորդակցական արժեք ներկայացնող բազմաթիվ վարժությունների կատարումն է:

Այս տիպի վարժությունները միշտ ունենալով խոսքի խթան արտացոլում են հաղորդակցման բնական պայմանները:

Վարժությունների հաղորդակցականությունն ապահովվում է.

- ուսումնական իրադրություններով
- լեզվական նյութի՝ ըստ իրադրության ընտրությամբ
- առաջադրանքների ճշգրիտ ձևակերպումով [Աստվածատրյան 1988:290]:

2. Փորձարարական ուսուցման և հետազոտական մեթոդների կիրառության միջոցով բերականության ուսուցման արդյունավետության ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում հանրակրթական միջին դասարանում

Ժամանակակից յուրաքանչյուր դպրոցի խնդիրն է սովորողներին ապահովել որակյալ և մատչելի կրթությամբ՝ անկախ նրանից խոսքը գնում է մայրենի, թե օտար լեզվի ուսուցման մասին: Թե միջնակարգ և թե ավագ դպրոցների խնդիրն է, որպեսզի սովորողները ունենան հենքային գիտելիքների բազա, ինչպես նաև կարողանան խոսել օտար լեզվով:

Ռուսերենն ունի ներկա և անցյալ ժամանակաձևեր: Այսինքն՝ նրանց նկարագրած գործողությունները տեղի են ունենում ներկայում և անցյալում :

Պարզելու համար, թե որքանով է արդյունավետ յուրացվել ներկա և անցյալ ժամանակաձևերը սովորողների կողմից, ինչ հիմնական սխալներ են թույլ տալիս և ինչպիսին է տվյալ նյութի կիրառման մեխանիզմների ձևավորվածության աստիճանը՝ մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք թիվ 134 դպրոցի 5ա դասարանի 14 աշակերտների հետ:

Մինչ թեստավորումը աշակերտներին բացատրվել է ներկա և անցյալ ժամանակաձևերը, որն ամրապնդվել է վերարտադրողական և ընկալողական վարժություններով, որոնք առկա են դասագրքում: Այնուհետև տրվել է 15 բոպեանոց թեստ առաջադրանք, որը ներառում է նաև ներկա և անցյալ ժամանակաձևը: Թեստավորման առաջադրանքներում պետք է սովորողները ընտրեն փակագծերում տրված տարբերակներից ճիշտը: Առաջինը վերաբերական է ներկա ժամանակաձևին, երկրորդը՝ անցյալ ժամանակաձևին և երրորդը՝ խառը տիպի: Նախադասությունների ընդհանուր քանակը՝ 13:

Արդյունքում՝ 14 աշակերտներից 9-ը գրել են անթերի, 5-ը սխալվել են,



ընդ որում՝

Աղյուսակ **1**

Թեստ **1**					
Առաջադրանքի համարը	Աշակերտների ընդհանուր թիվը	Ճիշտ պատասխան Ընդհանուր թիվ	Սխալ պատասխան	Չի պատասխանել	Սխալներն արտահայտված տոկոսներով
1. Ներկա	14	10	4	0	28%
2. Անցյալ	14	11	3		21%
3. Ներկա-անցյալ	14	12	2		14%

Ցուրաքանչյուր առաջադրանում սխալների տոկոսը կազմում է



Ինչպես երևում է առաջին թեստավորման արդյունքներից, որն անցկացվեց 14 աշակերտների հետ, 9-ը աշակերտները աշխատանքը կատարել են անթերի, այսինքն 64 տոկոսը, մյուս 5-ը՝ 36 տոկոսը ունեն սխալներ: Համաձայն երկրորդ տրամագրի ակնհայտորեն երևում է, որ սխալների 28 տոկոսը ներկա ժամանակաձևի կիրառության հետ է կապված, 21 տոկոսը անցյալ, իսկ 14 տոկոսը շփոթել են ժամանակաձևերը:

Առավել արդյունավետ յուրացման նպատակով և հետագա սխալներից խուսափելու համար մեր կողմից առաջարկվում է ներկա և անցյալ ժամանակաձևերի հիմնական տարբերություններն ընդգծող գծապատկերների կիրառություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքը, հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

- Սովորողների խոսքային կարողությունների զարգացման գործընթացում էական դեր է խաղում ռուսերենի քերականությունը:

1. Քերականության արդյունավետ յուրացման և ամրապնդման գործընթացում կարևոր նշանակություն ունեն վերարտադրողական և ընկալողական վարժությունները:
2. Ներկա և անցյալ ժամանակաձևերի

ա. կազմությունը և կիրառության առանձնահատկություններն ռուսերենում

բ. ներմուծման և ամրապնդման ձևերի՝ ՀՀ դպրոցներում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ.

3. Սովորողների մոտ առկա են որոշակի բարդություններ ռուսերենի ներկա և անցյալ ժամանակաձևերի կիրառության մեջ:

- Հիմնական դժվարությունները պայմանավորված են ժամանակաձևերի կիրառական առանձնահատկությունների յուրացման թերացմամբ, ինչի արդյունքում շփոթվում են:
- Սովորողների մեծամասնությունը տիրապետում են ներկա ժամանակաձևի հետ կիրառվող ժամանակի մակբայներին և պարագայական կապակցություններին, ինչը նպաստել է տվյալ նախադասությունների անթերի գրառմանը:
- Թեստավորման արդյունքների որակական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ սխալները հիմնականում պայմանավորված են եղել նաև.
  - թույլ լեզվազգացողությամբ,
  - մեխանիկական մտապահմամբ
  - Վարժությունների և ոչ բավարարար գծապատկերների կիրառմամբ, որոնք նպաստում են քերականական գիտելիքի պրակտիկ կիրառությանը և իմաստավորված մտապահմանը:
  - Մեր կողմից առաջարկվում է կիրառել քերականական դասավանդման գործընթացում գծապատկերներ՝ զուգակցած անհրաժեշտ վարժությունների փաթեթներով, որոնք կնպաստեն իմաստավորված յուրացմանը և գրավոր և բանավոր խոսքային գործածությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ.Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս հրատարակչություն, 1985
2. Колкер Я. М., Устинова Е. С., Еналиева Т. М. Практическая методика обучения иностранному языку. М., 2000

3. Аспекты обучения иностранному языку. Формирование лексических навыков речиhttp://xn--i1abbnckbmcl9fb.xn--p1ai/%D1%81%D1%82%D0%B0%D1%82%D1%8C%D0%B8/601177/:/22.01.2018